ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

11-րդ դասարան

1. Ամենայն հայոց բանաստեղծի մասին հնչել են անթիվ գնահատականներ, նրան տրվել է 2 տասնյակից ավելի պատվանուններ՝ հայոց Պուշկին, հմուտ, հանճարեղ լոռեցի, հայ ժողովրդի ազնիվ կենսագիր և այլն։ Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը։

«Ու կընքողըս Նա Ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ»։ Հովհաննես Թումանյան

«Թումանյանի պոեզիան հենց ինքը՝ Հայաստանն է հին ու նոր՝ վերածնված և տպավորված մեծ վարպետի բանաստեղծություններում »։ Վալերի Բրյուսով

«Հովհաննես Թումանյանը այն կախարդն է, այն Այվազովսկին , որ վրձինը ձեռքին գոչում է տարերքին և հնազանդեցնում իրեն»։ Վալերի Բրյուսով

Նա մեծ էր հողով, արյունով. արմատներ ուներ նա հողում,
Իր երգերը գեղջուկ նաիրցու քրտինքով էր նա ողողում,
Հանճարեղ երգերում նրա իր երկրի արևն էր շողում;
Նա մեծ էր հողով, արյունով. արմատներ ուներ նա հողում։ Եղիշե Չարենց

Անզուգական լոռեցու «Անուշ» պոեմի լրամշակված ու բյուրեղացած տարբերակը լույս տեսավ 1903-ին. այս պոեմում խտացված են բանաստեղծական հանճարի բոլոր հատկանիշները։ Ընդամենը 850 տողում արտահայտված են մեր ժողովրդի հոգևոր գեղեցկությունները, կյանքն ու կենցաղը,« հոգեբանությունն ու հոգեխառնությունը», ազգային սովորությունները, կենարար բնության մեջ խտացած կյանքի լույսն ու խավարը։Պոեմում մի ողբերգական սիրավեպի միջոցով Թումանյանը տալիս է 19-20րդ դարերի իր հայրենիքի համապարփակ պատկերն ու պատմությունը։ Հյուսելով սիրո հավերժական դրաման բնության ազատ զավակների՝ Անուշի և Սարոյի միջոցով, Թումանյանը փաստում է.«Ճշմարիտ սերը ագահ է, անհանգիստ, տարօրինակ»։ Նահապետական ադաթներով կաշկանդված սիրահարները , տեղ չունենալով այս ցուրտ, անիրավ ու դաժան աշխարհում, բարձր սարերն ու սարի ծաղիկներին են դարձնում իրենց սիրո վկան, միայն բնությունն է սգում «անմուրազ մեռած սիրահարների» համար. նրանք տեղ չունեն այդ ազատ բնության մեջ ապրելու և, ի վերջո , բարձրանում են երկինք՝ այնտեղ՝ աստղային հեռուներում հանդիպելու միմյանց, և շքեղ է այդ աստղացած սիրահարների հանդիպումը։ Իսկ ներքևում սգակիր գետն է՝ **ծեր Դեբեդը՝ Սիրտը քրքրած, ջուրը փրփրած. քարոտ ափին, լեռ քարափին, դեռ ծեծում է, հեծեծում է։**
Անուշի գեղեցկությունը Թումանյանը նկարագրել է պատկերավոր ու գեղեցիկ.

1.Ափսո՜ս, Անո՜ւշ, սարի ծաղիկ….Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ, Ափսո՜ս էդ ծով աչքերին..
2.Աղջի՛, անաստված, նստի՛ր վրանում, ի՞նչ ես դուրս գալիս, խելքամաղ անում…
3.Ա՛յ սարի աղջիկ, ա՛յ սիրուն աղջիկ, ա՛յ դու կարմրաթուշ, թուխամազ Անուշ..
4. Ա՛յ սև աչքերով, ա՛յ ծով աչքերով, ունքերդ կամար..
5. Ու մազերն անկարգ տված թիկունքով ու ցրված շիկնած այտերի վրան,
Դուրս եկավ թեթև ամպերի տակից Անուշը՝ փախած եղնիկի նման…
…….գետինը մտնի երկար հասակդ….
Բանաստեղծը կերտում է բնությանը համահունչ, բնության գրկում ապրող գեղեցկուհու կերպարը՝ առանց ավելորդ մակդիրների, և մեր առջև կանգնում է գեղեցկության թումանյանական ըմբռնումը՝ «Գեղեցիկ է բնականը»։

2. Գրիգոր Զոհրապը՝ նորավեպի իշխանը, հայ գրականության «ամենանուրբ գրողներից է, մարդկային հոգեբանության ամենանուրբ թարգմանը»։ Ծնվել է Պոլսում 1861-ին, սովորել Օրթագյուղի Մաքրուհյան և Լուսավորչյան վարժարաններում. աշակերտել է ժամանակի ճանաչված բանաստեղծ Թովմաս Թերզյանին, այնուհետև ուսումը շարունակել Կալաթա- Սերայի երկրաչափական և ճարտաապետական ճյուղում և, ստանալով ճարտարապետի վկայական, շատ կարճ ժամանակով զբաղվել այդ մասնագիտությամբ։ Այնուհետև ստանում է իրավաբանական փայլուն կրթություն՝ դառնալով ժամանակի հանրաճանաչ փաստաբան և առանց խտրականության պաշտպանում արդարների իրավունքները; Նրա անվան հետ են կապվում ժամանակի գրեթե բոլոր աղմկահարույց գործերի պաշտպանությունն ու հաղթանակը։Զոհրապը գրող, հասարակական ու քաղաքական գործիչ է հավասարապես։ Արևմտահայ իրականության մեջ նա ունեցել է նույն կոչումն ու համարումը, ինչ ունեցել է Թումանյանը արևելահայ կյանքում։ Զոհրապը միշտ կանգնած էր «պատնեշին վրա»։Հայ ժողովրդի անխոնջ պաշտպանն ու հոգածուն էր նրա բոլոր ճակատագրական ժամերին։ 1895-96 թվականներին նա համարձակորեն իր ձայնը բարձրացրեց ի պաշտպանությու հայ, բուլղար, հույն քաղաքական ամբաստանյալների՝ փրկելով հարյուրավոր կյանքեր։Նա համարձակորեն իր ձայնը բարձրացրեց հայ ժողովրդի եղերական բորոր ժամերին, ֆրանսերենով, ֆրանսիացու կեղծանունով լույս ընծայեց «Հայկական հարցը վավերագրերի լույսի տակ» գրքույկը՝ աշխարհի առաջադեմ ազգերին հորդորելով իրենց ձայնը բարձրացնելու ի պաշտպանություն մորթվող ժողովրդի(Թալեաթն, իհարկե, հասկացել էր, թե ով է հեղինակը)։ Լինելով Թուրքիայի Մեջլիսի մեբուս՝ նա պահանջում է երիտթուրքերից՝ վերջ տալ հայաջինջ քաղաքականությանը։ Ադանայի ջարդերի ժամանակ պահանջում է պատժել ոճրագործներին, 1911-ին հուշագիր է ուղարկում թուրք վարչապետին՝ մատնանշելով ավերված գյուղերն ու քաղաքները, մորթված հազարավորներին և պահանջում դադարեցնել հանիրավի սպանդը։ :1915-ին նա մերժում է բարեկամների՝ երկրից հեռանալու հորդորը.«Որո՞ւ թողում սա

անտեր ու անգլուխ ժողովուրդը…»։ Նա համարձակորեն հաշիվ է պահանջում իր «ընկեր» Թալեաթից.«օր մը, ապահով եղեք, որ հաշիվ պիտի պահանջվե ձեզմե, և դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»։ Մեծ մարդասերն ու տաղանդավոր փաստաբանը, անզուգական գրողն ու հրապարակախոսը գազանորեն մորթվում է աքսորի ճանապարհին…Իսկ թուրքերը դեռ չեն տվել իրենց պատասխանը և չեն կանգնել պատմության դատաստանի առջև…
Զոհրապի և եղեռնազարկ մյուս գրողների մասին գրել է արձակագիր Պերճ Զեյթունցյանը՝ «Վերջին արևագալը» փաստագեղարվեստական վեպում։ Այդ վեպը խորհրդանշում է հայ ժողովրդի արյունոտ պատմության վերջին լուսաբացը, որն ավարտվեց նրա անխոնջ ու ազնիվ զավակի սպանությամբ, գալիք արևագալների համար իրենց կյանքը նվիրաբերած միլիոնավոր անմեղների արյամբ։ Հեղինակը հավատում է, որ դա մեր ժողովրդի ցեղասպանության վերջին արևագալը պետք է լինի, հետո պիտի բացվեն լուսավոր արշալույսներ ու խաղաղ կյանք։

3. Լևոն Շանթը հայ գրականության ամենափնտրված, ամենահոգեհարազատ դեմքերից է, որի հետ յուրաքանչյուր հանդիպում հոգու ու մտքի բախում է՝ ալեբախումներով ու խաղաղ հանդարտությամբ։ Նա խորհրդապաշտական , գաղափարապաշտական գրականության հետևորդներից է՝ իր յուրահատուկ ոճով, պատկերներով, անսահման երևակայությամբ, որ շաղախված է ժամանակի հրամայականով։
Պարտվել էր ռուսական առաջին հեղափոխությունը, բանտերը լցված էին հեղափոխականներով, տիրում էր համընդհանուր ընկճվածություն, և Շանթի դրաման ասես գալիս էր ոգեկոչելու վիատվածներին, նրանց տանելու փոթորկուն կյանքի հորձանուտը։
Դրաման գրվել է 1909-ին՝ 40 օրվա ընթացքում, երբ Շանթը, քութեշով հիվանդ, փակված էր տանը։ Լույս է տեսել 1912-ին ,Պոլսում։ Վերնագիրը սոսկ պայմանական է, այնքանով, որքանով հին աստվածները փառաբանում էին կյանքը, գեղեցկությունը, սերը, որոնք բոլոր ժամանակների համար են, ունեն համաշխարհային հնչեղություն.«Հազարամյակ մը մեզմե առաջ»-ի հիշատակումը պարզապես արտաքին պայման է (չնայած առկա են պատմական փաստեր. Կոմիտաս եպիսկոպոս, Սյունյաց Վասակ Գաբուռ իշխանի կինը՝ Մարիամ իշխանուհին, եկեղեցիների ցայժմ կանգուն լինելը)։ Քողավորը իշխանադուստր Սեդան է, որին փրկել էր Աբեղան, նա երազներով լցնում է «ունայնության փոսը»՝ միաժամանակ ժխտելով հոռետեսության գոյության իրավունքը, ի վերջո այդ երազները Աբեղային տանում են կյանքի ծով, քանի որ պատրանքային հանդիպման ժամանակ Աբեղան այլևս ընդունում է հին աստվածների կանչերը՝ պատասխանելով իր հետագա ճակատագրով։

Աբեղան տաղտկալի երազ է համարում մենաստանի կեցությունը՝ հիշեցնելով Կույրին իր հետագա ճակատագրով՝
«Երնե՛կ բաց ըլլային աչքերդ, որ չտեսնեիր».Ուրեմն՝ հաղթում է կյանքը։

Իջեք, իջեք երազներ, Իջեք զգույշ, երազներ,
Շոյող, անուշ երազներ, Իջեք քնքուշ երազներ։
Ծաղիկ, կանաչ, թարմ հյուսեր, Բախտի կարկաչ ու հույսեր
Դող ու անձուկ ու կարոտ, ծածուկ արցունք վարանոտ,
Խելքի, մտքի հակասում, Միշտ նոր կյանքի սպասում…..

4. Հայ գրականության երկու մեծեր նախանձելի մտերմություն են ունեցել իրար հետ Չարենցի կյանքի ողբերգական օրերին։1925-ին Չարենցը Վենետիկում հանդիպում է Ավետիք Իսահակյանին և նրան կնքում «Վարպետ» պատվանունով։ Չարենցին ձերբակալեցին 1937-ին, և Վարպետը մինչև իր կյանքի մայրամուտը պահպանեց այդ ջերմ ընկերությունը՝ խնամելով Չարենցի որբերին. (այս մասին կա Արփենիկ Չարենցի՝ Չարենցի ավագ դստեր վկայությունը)։ 1937-ին Չարենցի կինը՝ Իզաբելան, բանտից ստանում է Չարենցի սպիտակեղենը՝ լվանալու և սպիտակ թաշկինակի վրա տեսնում է մատիտով գրված հետևյալ նամակը. «Սիրելի Ավետիք, ներքևում երգում էին քո երգը, սիրտս լցվեց, և ես գրեցի հետևյալ ստիխը . ընդունիր իբրև ձոն և ողջույն». ահա այդ «ստիխից» մի քառատող՝

……Եվ սերունդներ այսպես գային,
Եվ կարդային խուղիս որմին
Սրտիս միակ երգը ջերմին,-
Եվ երգս այդ ես քեզ տայի….

«Այս է, սիրելի Ավետիք։ Ոգով պայծառ եմ և առույգ. ընտանիքիս հոգսն է միայն ինձ հոգեպես ընկճում և հոշոտում։ Այդ էլ թողնում եմ ալլահին և հայ ժողովրդին։ 1937.6.X բանտ »։ Սա, ըստ էության ,Չարենցի վերջին բանաստեղծությունն է. այդ թաշկինակը պահվում է Իսահակյանի ձեռագրերի հավաքածուում։
Բազմաժանր է Իսահակյանի գրիչը՝ բանաստեղծություն, պոեմ, լեգենդ, բալլադ, պատմվածք, զրույց, անավարտ վեպ։
Այս հարուստ գանձարանում կա մի սքանչելի բանաստեղծություն՝«Կտակ» վերնագրով։ Հայ գրողներից շատերն են գրել կտակներ. Իսահակյանի կտակը առանձնանում է խոր փիլիսոփայական հենքով, քնարական հերոսի բնավորության դրսևորմամբ, նրա վերաբերմունքով կյանքի, անհատի նկատմամբ։
Բանաստեղծությունը ունի պարադոքսալ բնույթ. անսահման սիրելով նոր աշխարհ եկող մարդուն, Իսահակյանը նրանից ատելու չափ վախենում է. «Լսի՛ր,տղա՛ս , ինձ կթաղես անհայտ մի տեղ աննշան, որ չիմանան, մարդիկ չգան՝ շիրմիս քարը գողանան… »։

Սա մարդուն խորությամբ ճանաչելու իսահակյանական խորհուրդն է,նոր կյանք մտնող փոքրիկին Իսահակյանը հորդորում է չմոռանալ փորձով իմաստնացած իր խրատները՝ միշտ ուշադիր լինել դիպվածին, որովհետև դիպվածն է միշտ «տիրական դառնում», որոշում հետագա անելիքը, խրատում է զգացմունքի և խելքի «բանավեճում» առաջնորդվել խելքով, «ատելու չափ սիրի՛ր մարդկանց, բայց լավություն միշտ արա»։ Ատելությունը իրոք բարձրագույն սեր է դառնում նաև «Աբու-Լալա Մահարի»-ում, մերժումը միշտ դառնում է յուրատեսակ հաստատում։Բանաստեղծը զգուշացնում է կեղծ ընկերության մասին, հորդորում միշտ հենարան ունենալ ինքն իրեն (բացարձակ ճշմարտություն) և երբեք չընկճվել պարտության առաջ՝«խաղերով լի այս աշխարհում,խաղդ եթե տանուլ տաս, Զվարթ եղի՛ր , ու այդպիսով բախտի վրա կխնդաս…».Ասել է թե՝ պարտությունը վերջ չէ, մահ չէ, կենսասիրությամբ պիտի հաղթես վատին, չարին, անհաջողությանը։ Միաժամանակ հորդորում է ապրել անվախ՝ պատրաստ ցանկացած փորձության՝

Ինչ որ լինի, թող լինի։

Իսկ վերջին միտքը իսկապես պարադոքսալ է, նա մարդկանց լավ է ճանաչում և համոզված է, որ նման բան լինել չի կարող, որովհետև իր կտակը միանգամից ժխտում է դա։ Այս կտակի ենթատեքստը ուժեղ , անկախ, սիրառատ մարդ տեսնելու ցանկությունն է.«Կտակը » բանաստեղծի նվիրական ցանկությունն է, որով պարտավորեցնում է բոլորիս՝ ապրել գեղեցիկ, արարել բարին, սիրել մարդուն։

Հայ գրականության մարզային օլիմպիադայի հարցաշարերի գնահատման չափանիշներ

11-րդ դասարան

1-ին հարց

1 - ենթահարց՝	2 միավոր
2 - ենթահարց՝	4 միավոր
3 - ենթահարց ՝	4 միավոր

2-րդ հարց

1 – ենթահարց՝	2 միավոր
2 - ենթահարց՝	6 միավոր
3-4- ենթահարցեր՝	1-ական միավոր

3-րդ հարց

1 - ենթահարց՝	2 միավոր
2-3 ենթահարցեր՝	1-ական միավոր
4 - ենթահարց՝	2 միավոր
5-6 ենթահարց՝	1-ական միավոր
Հատվածը՝	2 միավոր

4-րդ հարց

1 - ենթահարց՝	4 միավոր
2 –ենթահարց՝	4 միավոր
3 –ենթահարց՝	2 միավոր

Յուրաքանչյուր հարց գնահատվում է առավելագույնը 10 միավոր

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան